ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...



ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
(1939–2016)

Հայ գրող, արձակագիր, թարգմանիչ: Ռուբեն Հովսեփյանը 1956 թ. ավարտել է Արմավիր քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1956–1957 թթ. աշխատել է Արմավիրի հաստոցաշինական գործարանում: 1962 թ. ավարտել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետը: 1962–1964 թթ. որպես երկրաբան աշխատել է Թուրքմենական ԽՍՀ-ում: 1965–1966 թթ. եղել է «Ավանգարդ» թերթի արվեստի և գրականության բաժնի վարիչը, 1966–1969 թթ.՝ «Գրական թերթի» շրջիկ թղթակիցը, 1970–1974 թթ.՝ «Սովետական գրականություն» ամսագրի արձակի բաժնի վարիչը: 1974–1975 թթ. սովորել է Մոսկվայի բարձրագույն սցենարական դասընթացներում: 1975–1976 թթ. աշխատել է ՀԽՍՀ նախարարների խորհրդի հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում որպես երիտասարդական հաղորդումների գլխավոր խմբագիր, 1976–1979 թթ.՝ «Եթերում է Երևանը» թերթի խմբագրությունում: 1982–1987 թվականներին եղել է «Սովետական գրող» (այժմ՝ «Նաիրի») հրատարակչության գլխավոր խմբագիր, 1988–1989 թթ. ՀԳՄ քարտուղար, 1989 թ.՝ «Նորք» ամսագրի գլխավոր խմբագիր: Նրա պատմվածքներն ու վիպակները հատկանշվում են արծարծվող թեմաների արդիականությամբ («Որոնումներ», 1965, «Երկու վիպակ: Ճիչ: Հայոց թաղ», 1970, «Հնձան», 1972 (համանուն կինոնկար, 1973) և այլ ստեղծագործություններ): Թարգմանել է Լև Տոլստոյի ստեղծագործություններից, Գ. Գ. Մարկեսի «Հարյուր տարվա մենությունը»: Նրա սցենարով նկարահանվել է «Հնձան» կինոնկարը («Հայֆիլմ», 1973):